ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանի՝ Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Սրբուհի Գալյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա), 2020թ. փետրվարի 16-ից 18-ը:

Հրավիրող կողմը՝ ԵԱՀԿ Տնտեսական և բնապահպանական գործունեության համակարգող, դեսպան Վուկ Ժուգիչ:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Անվտանգության, կայունության և տնտեսական աճի խթանումը ԵԱՀԿ տարածաշրջանում. կոռուպցիայի կանխարգելումը և դրա դեմ պայքարը նորարարության, թափանցիկության և թվայնացման միջոցով» թեմայով ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական 28-րդ համաժողովին:

Քննարկված թեմաները՝ Համաժողովի ընթացքում քննարկվել են կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի մարտահրավերներին ու հնարավորություններին, թվայնացման և թափանցիկության ապահովման միջոցով կոռուպցիայի կանխարգելման ու դրա դեմ պայքարին, եկամուտների և շահերի հայտարարագրմանը, ինչպես նաև մասնակցային մոտեցումների միջոցով թափանցիկության բարձրացմանն առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ԵԱՀԿ Տնտեսական և բնապահպանական գործունեության համակարգող, դեսպան Վուկ Ժուգիչի հրավերով «Անվտանգության, կայունության և տնտեսական աճի խթանումը ԵԱՀԿ տարածաշրջանում. կոռուպցիայի կանխարգելումը և դրա դեմ պայքարը նորարարության, թափանցիկության և թվայնացման միջոցով» թեմայով

ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական 28-րդ համաժողովին մասնակցելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանը 2020թ. փետրվարի 16-ից 18-ը գտնվել է Ավստրիայի Հանրապետությունում (Վիեննա):

Համաժողովի ընթացքում քննարկվել են կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի մարտահրավերներին ու հնարավորություններին, թվայնացման և թափանցիկության ապահովման միջոցով կոռուպցիայի կանխարգելման ու դրա դեմ պայքարին, եկամուտների և շահերի հայտարարագրմանը, ինչպես նաև մասնակցային մոտեցումների միջոցով թափանցիկության բարձրացմանն առնչվող հարցեր:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանը Համաժողովի շրջանակներում ս.թ. փետրվարի 17-ին «Եկամուտների հայտարարագրում և մասնակցային մոտեցումների միջոցով թափանցիկության բարձրացում» թեմային առնչվող 3-րդ նստաշրջանի ընթացքում հանդես է եկել որպես բանախոս և համաժողովի մասնակիցներին ներկայացրել է վերջին երկու տարում Հայաստանում տեղի ունեցած ժողովրդավար գործընթացները, տարբեր մակարդակներում կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝ շեշտելով, որ 2017 թվականի համեմատ 2018թ-ին կոռուպցիոն հանցագործությունների հիմքով հարուցված քրեական գործերի քանակն ավելացել է 60%-ով:

Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը անդրադարձել է ՀՀ կառավարության կողմից կոռուպցիայի դեմ անզիջում պայքարի հիմնական ուղղություններին, ՀՀ կառավարության կողմից 2019թ. հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությանը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի հիմնական գերակայություններին՝ առանձնացնելով մասնակցային մեխանիզմների ներդրումն ու հայտարարագրման համակարգի կատարելագործումը: Այս համատեքստում, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը ընդգծել է, որ համակարգն

էականորեն բարելավվել է, և ներկայում բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները, դատավորները, դատախազները, քննիչները, ինչպես նաև բարձրաստիճան մի շարք այլ պաշտոնատար անձինք և նրանց ընտանիքի անդամներ էլեկտրոնային եղանակով ներկայացնում են գույքի և եկամուտների հայտարարագիր:

Սրբուհի Գալյանը անդրադարձել է նաև ձևավորված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթներին, կոռուպցիոն հանցագործությունների ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակին՝ https://azdararir.am/am/-ին, իրավական ակտերի մշակման գործընթացում հասարակության ներգրավվածությունն ապահովող www.e-draft.am հարթակին, իրական սեփականատերերի բացահայտմանն ու էլեկտրոնային գործիքների շարունակական ներդրման միջոցով վարչարարության հետագա պարզեցմանն ուղղված աշխատանքներին:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ՝

Սրբուհի Գալյան

19.02.2020թ.